

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ  
ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՎՐԱ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                            |           |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .....</b>                                                                                                               | <b>2</b>  |
| <b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....</b>                                                                                                                  | <b>3</b>  |
| <b>ԳԼՈՒԽ 1. Տնտեսական մրցակցության իրավական և տեսական հիմքերը .....</b>                                                                    | <b>5</b>  |
| 1.1. Տնտեսական մրցակցության հասկացությունը և իրավատնտեսագիտական էությունը: .....                                                           | 5         |
| 1.2. ՀՀ տնտեսական մրցակցության իրավական կարգավորումը: .....                                                                                | 7         |
| <b>ԳԼՈՒԽ 2. Տնտեսական մրցակցության խախտումների ազդեցությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա .....</b>                              | <b>19</b> |
| 2.1. Օտարերկրյա ներդրումների իրավական և տեսական նշանակությունը: Մրցակցության խախտումների ազդեցությունը ներդրումային գրավչության վրա: ..... | 19        |
| 2.2. ՀՀ ներդրումային միջավայրի գնահատումը մրցակցային քաղաքականության համատեքստում .....                                                    | 21        |
| 2.3. Մրցակցության խախտումների հետևանքով ներդրումային վեճերի առաջացման հնարավոր իրավական ռիսկերը.....                                       | 25        |
| <b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....</b>                                                                                                                | <b>28</b> |
| <b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....</b>                                                                                                             | <b>30</b> |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից համաշխարհային տնտեսության պայմաններում օտարերկրյա ներդրումների ներգրավումը հանդիսանում է պետությունների տնտեսական զարգացման, արտադրական ներուժի ընդլայնման, տեխնոլոգիական առաջընթացի և միջազգային տնտեսական համագործակցության խորացման կարևորագույն նախադրյալներից մեկը: Ներդրումների ներգրավման մակարդակը մեծապես պայմանավորված է ոչ միայն պետության տնտեսական ցուցանիշներով, այլև այն իրավական և ինստիտուցիոնալ միջավայրով, որը երաշխավորում է ներդրողների իրավունքների պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը և արդար մրցակցային պայմանների ապահովումը: Այդ համատեքստում տնտեսական մրցակցության արդյունավետ պաշտպանությունը դիտարկվում է որպես ներդրումային գրավչության ձևավորման առանցքային գործոններից մեկը:

Ազատ և արդյունավետ մրցակցությունը նպաստում է շուկաների ազատությանը, ռեսուրսների արդյունավետ բաշխմանը, արտադրողականության բարձրացմանը, նորարարությունների զարգացմանը և սպառողների բարեկեցության աճին: Ընդհակառակը՝ հակամրցակցային համաձայնությունները, գերիշխող դիրքի չարաշահումը, շուկաների բարձր կենտրոնացվածությունը, պետական մարմինների կողմից մրցակցային չեզոքության խախտումները և այլ հակամրցակցային դրսևորումներ համապատասխանաբար սահմանափակում են տնտեսավարող սուբյեկտների հավասար հնարավորությունները, խոչընդոտում նոր մասնակիցների մուտքը շուկա և, ի վերջո, նվազեցնում երկրի ներդրումային գրավչությունը: Նման պայմաններում օտարերկրյա ներդրողները բախվում են լրացուցիչ տնտեսական և իրավական ռիսկերի, որոնք կարող են ազդել ինչպես ներդրում կատարելու որոշման, այնպես էլ արդեն իրականացված ներդրումների արդյունավետության վրա:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տնտեսական մրցակցության և օտարերկրյա ներդրումների փոխադարձ կապը վերջին տարիներին ձեռք է բերել ոչ միայն տնտեսագիտական, այլև իրավական կարևոր նշանակություն: Մրցակցային քաղաքականության արդյունավետությունը կարող է ազդել ներդրումային միջավայրի կայունության, ներդրողների վստահության և նույնիսկ միջազգային ներդրումային վեճերի առաջացման հավանականության վրա: Ուստի անհրաժեշտ է համալիր ուսումնասիրել տնտեսական մրցակցության խախտումների ազդեցությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա՝ համադրելով մրցակցային իրավունքի և միջազգային ներդրումային իրավունքի մոտեցումները:

Աշխատության նպատակն է ուսումնասիրել տնտեսական մրցակցության խախտումների ազդեցությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա, վերլուծել Հայաստանի Հանրապետության մրցակցային իրավակարգավորումը, գնահատել երկրի ներդրումային միջավայրը մրցակցային քաղաքականության համատեքստում, ինչպես նաև բացահայտել մրցակցության խախտումների հետևանքով ներդրումային վեճերի առաջացման հնարավոր իրավական ռիսկերը:

Աշխատության ընթացքում կիրառվել են իրավական գիտությանը բնորոշ ընդհանուր և հատուկ մեթոդներ, մասնավորապես՝ համակարգային, ձևական-իրավաբանական, համեմատական-իրավական, վերլուծական և տրամաբանական մեթոդները: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, միջազգային իրավական աղբյուրները, միջազգային ներդրումային արբիտրաժի պրակտիկան, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և գիտական գրականության համապատասխան ուսումնասիրությունները:

# **ԳԼՈՒԽ 1. Տնտեսական մրցակցության իրավական և տնտեսական հիմքերը**

## **1.1. Տնտեսական մրցակցության հասկացությունը և իրավատնտեսագիտական էությունը:**

Մրցակցային քաղաքականության (կամ, ինչպես այն հաճախ անվանում են Միացյալ Նահանգներում, հակամենաշնորհային քաղաքականության) հստակ սահմանում տալը հեշտ խնդիր չէ: Այն կարելի է բնութագրել որպես քաղաքականության և իրավական նորմերի ամբողջություն, որն ուղղված է ապահովելու, որ շուկայում մրցակցությունը չսահմանափակվի հասարակության համար վնասակար ձևով: Նման ձևակերպումը ենթադրում է, որ մրցակցության յուրաքանչյուր սահմանափակում ինքնին վնասակար չէ: Օրինակ՝ արտադրողի և մանրածախ վաճառողի միջև կնքված որոշ պայմանագրեր, որոնք սահմանափակում են այլ մանրածախ վաճառողների մրցակցությունը, որոշ դեպքերում կարող են նպաստել տնտեսական բարեկեցության աճին: Միևնույն ժամանակ, այս սահմանումը բավարար չափով հստակ չէ, քանի դեռ չի պարզաբանվում, թե ինչ է նշանակում «հասարակության համար վնասակար» մրցակցության սահմանափակում: Այդ հարցի պատասխանը պահանջում է նախ հստակեցնել մրցակցային քաղաքականության նպատակները:

Մրցակցային քաղաքականության նպատակների վերաբերյալ տնտեսագիտական գրականության մեջ լայն տարածում ունի այն մոտեցումը, ըստ որի դրա հիմնական նպատակը տնտեսական բարեկեցության ապահովումն է<sup>1</sup>: Այս տեսանկյունից մրցակցային քաղաքականությունը կարելի է սահմանել որպես քաղաքականության և իրավական նորմերի ամբողջություն, որը նպատակ ունի կանխելու շուկայում մրցակցության այնպիսի սահմանափակումները, որոնք հանգեցնում են տնտեսական բարեկեցության նվազմանը: Հետևաբար, գործարար վարքագծի հակամրցակցային բնույթի և մրցակցային իրավական կարգավորման արդյունավետության գնահատումը պետք է իրականացվի՝ ելնելով հենց տնտեսական բարեկեցության վրա դրանց ազդեցությունից:

Միաժամանակ, այս մոտեցումը չի նշանակում, որ տնտեսական արդյունավետությունից բացի այլ հանրային շահեր կամ պետական քաղաքականության նպատակներ կարևոր չեն: Ընդհակառակը, եթե պետությունը ձգտում է իրականացնել սոցիալական, բնապահպանական կամ այլ հանրային քաղաքականության նպատակներ, ապա դրանք ցանկալի է հետապնդել այնպիսի կարգավորման գործիքներով, որոնք

---

<sup>1</sup> St' u Motta, M. (2004), Competition policy: Theory and practice. Cambridge University Press, էջ 38:

նվազագույն չափով են խաթարում մրցակցային գործընթացը: Տնտեսագիտական տեսանկյունից կարևոր է գնահատել, թե որ միջոցառումներն են նպաստում տնտեսական բարեկեցության բարձրացմանը, և որոնք՝ հակառակը, հանգեցնում դրա նվազմանը: Այն դեպքերում, երբ տնտեսական արդյունավետության և այլ հանրային նպատակների միջև առաջանում է հակասություն, վերջնական ընտրությունը պատկանում է քաղաքական որոշում կայացնողներին, դատարաններին և հանրային քաղաքականություն ձևավորող այլ սուբյեկտներին, որոնք են որոշում, թե տվյալ իրավիճակում որ արժեքին պետք է տրվի առաջնահերթություն:

ՀՀ օրենսդրության համաձայն տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն է համարվում ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները<sup>2</sup>:

Այսպիսով, տնտեսական մրցակցությունը շուկայական տնտեսության հիմնարար ինստիտուտներից է, որի արդյունավետ ապահովումը նպաստում է ռեսուրսների օպտիմալ բաշխմանը, տնտեսական արդյունավետության բարձրացմանը և սպառողների բարեկեցության աճին: Մրցակցային քաղաքականությունն իր հերթին ուղղված է ոչ թե մրցակցության յուրաքանչյուր սահմանափակման բացառմանը, այլ միայն այնպիսի սահմանափակումների կանխարգելմանը, որոնք բացասաբար են անդրադառնում տնտեսական բարեկեցության և շուկայի բնականոն գործունեության վրա: Այս համատեքստում ՀՀ օրենսդրությամբ ամրագրված տնտեսական մրցակցության հասկացությունը համահունչ է մրցակցային իրավունքի ժամանակակից մոտեցումներին՝ դիտարկելով մրցակցությունը որպես շուկայական այնպիսի գործընթաց, որի պայմաններում որևէ տնտեսավարող սուբյեկտ ի վիճակի չէ միանձնյա ազդել ապրանքային շուկայի ընդհանուր պայմանների վրա: Հետևաբար, տնտեսական մրցակցության արդյունավետ պաշտպանությունը հանդիսանում է ոչ միայն առանձին տնտեսավարող սուբյեկտների իրավունքների, այլև հասարակական շահի և կայուն տնտեսական զարգացման ապահովման կարևոր նախապայման:

---

<sup>2</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 1:

## **1.2. ՀՀ տնտեսական մրցակցության իրավական կարգավորումը:**

ՀՀ-ում տնտեսական մրցակցության իրավական կարգավորման հիմքերը ամրագրված են նախևառաջ Սահմանադրական մակարդակում: ՀՀ Սահմանադրությունը տնտեսական համակարգի հիմքում ամրագրում է սոցիալական շուկայական տնտեսության մոդելը, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության սկզբունքների վրա: Միաժամանակ, պետության տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարության ապահովմանը<sup>3</sup>:

Մրցակցության պաշտպանության սահմանադրական հիմքերն առավել մանրամասն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածում, որը երաշխավորում է յուրաքանչյուր անձի տնտեսական, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Միևնույն ժամանակ, Սահմանադրությունը նախատեսում է, որ տնտեսական մրցակցության սահմանափակումները, ինչպես նաև մենաշնորհի հնարավոր տեսակներն ու դրանց թույլատրելի սահմանները կարող են սահմանվել բացառապես օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:<sup>4</sup> Այսպիսով, Սահմանադրությունը մի կողմից երաշխավորում է ազատ տնտեսական գործունեության իրականացումը, իսկ մյուս կողմից՝ սահմանում է պետության պարտավորությունը կանխելու այնպիսի վարքագիծը, որը կարող է խաթարել մրցակցային միջավայրը: Մասնավորապես, Սահմանադրությունը ուղղակիորեն արգելում է շուկայում մենաշնորհային կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնությունները՝ դրանք դիտարկելով որպես ազատ մրցակցության պաշտպանությանն ուղղված սահմանադրական պահանջների խախտումներ:

Սահմանադրական մակարդակում տնտեսական մրցակցության պաշտպանության սկզբունքի ամրագրումից հետո դրա գործնական իրացումն ու իրավական կարգավորումն ապահովվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), որը հանդիսանում է մրցակցային իրավունքի հիմնարար ճյուղային իրավական ակտը: Եթե Սահմանադրությունը ձևավորում է մրցակցության պաշտպանության սահմանադրաիրավական հիմքը՝ այն ճանաչելով որպես Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմնարար տարրերից մեկը, ապա նշված օրենքը սահմանում է այդ սկզբունքի իրականացման

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 11:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 59:

իրավական, կազմակերպական և ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ ապահովելով ազատ տնտեսական մրցակցության պահպանությունը, մրցակցային հարաբերությունների բնականոն զարգացումը և շուկայական տնտեսության արդյունավետ գործունեությունը: Այս առումով օրենքը հանդիսանում է այն հիմնական իրավական գործիքը, որի միջոցով պետությունը իրականացնում է մրցակցային քաղաքականությունը և ապահովում սահմանադրական դրույթների գործնական կենսագործումը:

Օրենքի ընդունման հիմքում ընկած է այն գաղափարը, որ մրցակցությունը չի հանդիսանում ինքնանպատակ իրավական արժեք, այլ տնտեսական զարգացման, արդյունավետ շուկայական հարաբերությունների ձևավորման և հանրային բարեկեցության ապահովման կարևորագույն միջոց: Ժամանակակից մրցակցային իրավունքը հիմնված է այն տնտեսական տեսության վրա, համաձայն որի՝ ազատ և արդյունավետ մրցակցային միջավայրը խթանում է ռեսուրսների առավել արդյունավետ բաշխումը, նպաստում է արտադրողականության բարձրացմանը, նորարարությունների զարգացմանը, ներդրումների ներգրավմանը, ապրանքների և ծառայությունների որակի բարելավմանը, ինչպես նաև սպառողական գների նվազեցմանը: Հետևաբար, մրցակցային իրավունքի հիմնական առաքելությունը ոչ թե առանձին տնտեսավարող սուբյեկտների շահերի պաշտպանությունն է, այլ հենց մրցակցային գործընթացի՝ որպես տնտեսական համակարգի արդյունավետության հիմքի պաշտպանությունը: Այդ պատճառով էլ ժամանակակից իրավական համակարգերում մրցակցության պաշտպանության նպատակն առավելապես ուղղված է շուկայի բնականոն գործունեության պահպանմանը, այլ ոչ թե շուկայում գործող առանձին մասնակիցների տնտեսական շահերի պաշտպանությանը:

Հենց այս գաղափարախոսությունն է արտացոլված նաև քննարկվող օրենքում: Օրենքի նպատակների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը մրցակցության պաշտպանությունը դիտարկում է բազմաշերտ իրավական կատեգորիա՝ այն կապելով ոչ միայն տնտեսական մրցակցության պահպանման, այլև ձեռնարկատիրության զարգացման, բարեխիղճ մրցակցության ապահովման և սպառողների շահերի պաշտպանության հետ<sup>5</sup>: Այս մոտեցումը լիովին համահունչ է եվրոպական մրցակցային իրավունքի ժամանակակից ընկալմանը, որի համաձայն մրցակցությունը հանդիսանում է ոչ միայն մասնավոր իրավահարաբերությունների, այլև հանրային տնտեսական քաղաքականության կարևորագույն գործիք<sup>6</sup>:

Օրենքի իրավակարգավորման առանձնահատկություններից է նաև նրա կարգավորման առարկայի լայն շրջանակը: Ի տարբերություն այն

<sup>5</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 1:

<sup>6</sup> Տե՛ս Van Bael & Bellis, Competition Law of the European Union (6th edn, Kluwer Law International 2021), էջ 61:

իրավակարգավորումների, որոնք մրցակցային իրավունքը սահմանափակում են բացառապես տնտեսավարող սուբյեկտների վարքագծի կարգավորմամբ, Հայաստանի Հանրապետության օրենքը մրցակցության հնարավոր սահմանափակումների աղբյուր է դիտարկում ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային իշխանության գործունեությունը: Օրենքի համաձայն՝ մրցակցային իրավահարաբերությունների մասնակից կարող են լինել ոչ միայն տնտեսավարող սուբյեկտները, այլև պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք և այլ սուբյեկտներ, եթե նրանց գործողությունները կամ որոշումները կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակման կամ շուկայի բնականոն գործունեության խաթարմանը<sup>7</sup>:

Նման մոտեցումը մրցակցային իրավունքի տեսության տեսանկյունից ունի սկզբունքային նշանակություն: Պատմականորեն մրցակցային իրավունքը ձևավորվել է որպես խոշոր տնտեսավարող սուբյեկտների շուկայական իշխանության սահմանափակման միջոց<sup>8</sup>, սակայն ժամանակակից տնտեսական հարաբերություններում մրցակցության վրա էական ազդեցություն կարող են ունենալ նաև պետական իշխանության իրականացրած գործողությունները: Պետությունը կարող է մրցակցությունը սահմանափակել ոչ միայն ուղղակի տնտեսական գործունեություն ծավալելու միջոցով, այլև վարչական ակտերի ընդունմամբ, առանձին տնտեսավարող սուբյեկտների համար արտոնություններ ստեղծելով, պետական օժանդակության տրամադրմամբ, շուկա մուտքի արհեստական խոչընդոտների ձևավորմամբ կամ տարբեր տնտեսավարողների նկատմամբ անհավասար կարգավորումներ սահմանելով: Հետևաբար, մրցակցության արդյունավետ պաշտպանությունն անհնար կլիներ, եթե իրավական վերահսկողությունը տարածվեր բացառապես մասնավոր հատվածի վրա՝ դուրս թողնելով պետական իշխանության տնտեսական ազդեցությունը: Այս իմաստով Օրենքը որդեգրել է ժամանակակից մրցակցային քաղաքականությանը բնորոշ մոտեցում՝ ճանաչելով, որ շուկայի ազատությունն ապահովելու համար անհրաժեշտ է վերահսկել մրցակցությունը սահմանափակող ցանկացած վարքագիծ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ վարքագիծն իրականացվում է մասնավոր, թե հանրային սուբյեկտի կողմից:

Օրենքի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա կառուցվածքն ամբողջությամբ հիմնված է մրցակցային իրավունքի տնտեսական տրամաբանության վրա: Օրենսդիրը նախ սահմանում է այն հիմնարար հասկացությունները,<sup>9</sup> որոնց միջոցով հնարավոր է բացահայտել շուկայում մրցակցային հարաբերությունների բնույթը,

<sup>7</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1:

<sup>8</sup> Տե՛ս Van Bael & Bellis, Competition Law of the European Union (6th edn, Kluwer Law International 2021), գլուխ 1:

<sup>9</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 4:

այնուհետև սահմանում է մրցակցությունը սահմանափակող վարքագծի առանձին տեսակները, դրանց կանխարգելման և վերահսկողության մեխանիզմները, իսկ վերջում՝ իրավակիրառ մարմնի լիազորություններն ու պատասխանատվության միջոցները: Անդրադառնալով Օրենքում տեղ գտած հասկացություններին՝ անհրաժեշտ է նշել, որ օրենքում տրված հիմնական հասկացությունները կատարում են ոչ միայն սահմանողական, այլև մեթոդաբանական գործառույթ՝ հանդիսանալով մրցակցային իրավունքի կիրառման մեկնակետը:

Հատկանշական է, որ Օրենքում օգտագործվող հասկացությունների զգալի մասը կրում է ոչ թե գուտ իրավական, այլ տնտեսական բնույթ: «Ապրանքային շուկա», «փոխարինելի ապրանք», «աշխարհագրական շուկա», «շուկայական իշխանություն», «գերիշխող դիրք», «անձանց խումբ», «համակենտրոնացում» և մի շարք այլ հասկացություններ հնարավոր չէ մեկնաբանել միայն իրավական նորմերի օգնությամբ<sup>10</sup>: Այս հանգամանքը վկայում է, որ մրցակցային իրավունքը հանդիսանում է այնպիսի իրավական ոլորտ, որտեղ իրավական գնահատականը հիմնվում է տնտեսական վերլուծության արդյունքների վրա: Հենց այդ պատճառով էլ մրցակցության պաշտպանության ոլորտում իրավակիրառ պրակտիկան չի կարող սահմանափակվել միայն օրենքի բառացի մեկնաբանությամբ, այլ պահանջում է յուրաքանչյուր գործի տնտեսական ազդեցության համակողմանի գնահատում:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի «ապրանքային շուկա» հասկացությունը<sup>11</sup>, որը մրցակցային իրավունքի առանցքային հասկացություններից է: Մրցակցային իրավահարաբերությունների գնահատման ելակետը միշտ հանդիսանում է համապատասխան շուկայի սահմանումը, քանի որ միայն դրանից հետո հնարավոր է պարզել, թե ովքեր են տվյալ շուկայում գործող մրցակիցները: Հետևաբար, ապրանքային շուկայի սահմանումը մրցակցային իրավունքում ոչ թե տեխնիկական գործընթաց է, այլ յուրաքանչյուր հետագա իրավական գնահատման անհրաժեշտ նախապայման, ինչն իր հերթին վկայում է սույն Օրենքի տնտեսական և իրավական բաղադրիչների սերտ փոխկապակցվածության մասին:

Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական մրցակցության պաշտպանությունն իրականացվում է մի շարք փոխկապակցված իրավական մեխանիզմների միջոցով, որոնցից

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>11</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 4՝ **ապրանքային շուկա**՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ սահմանված՝ որոշակի տարածքում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմանները որոշվում են գնորդի կողմից համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման տնտեսական հնարավորություններով և նպատակահարմարությամբ: Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով (...):

յուրաքանչյուրն ուղղված է մրցակցային հարաբերությունների տարբեր դրսևորումների կարգավորմանը: Օրենքի կառուցվածքային տրամաբանությունը վկայում է, որ օրենսդիրը մրցակցության պաշտպանության խնդիրը չի սահմանափակում միայն արդեն կատարված խախտումների արձանագրմամբ և պատասխանատվության կիրառմամբ, այլ ձևավորում է կանխարգելիչ, վերահսկողական և վերականգնողական միջոցների միասնական համակարգ: Այդ համակարգի առանցքում գտնվում են հակամրցակցային համաձայնությունների արգելքը, գերիշխող դիրքի չարաշահման կանխումը, տնտեսական համակենտրոնացումների վերահսկողությունը, անբարեխիղճ մրցակցության արգելքը, ինչպես նաև պետական մարմինների հակամրցակցային վարքագծի նկատմամբ վերահսկողությունը: Նշված ինստիտուտները, թեև կարգավորում են տարբեր իրավահարաբերություններ, փոխլրացնում են միմյանց և միասնաբար ապահովում մրցակցային միջավայրի բնականոն գործունեությունը:

Օրենքի կարևորագույն կարգավորման ուղղություններից առաջինը հակամրցակցային համաձայնությունների արգելքն է<sup>12</sup>: Տնտեսական մրցակցության հիմքում ընկած է այն սկզբունքը, որ շուկայում գործող յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ պետք է ինքնուրույն որոշի իր տնտեսական վարքագիծը՝ գների սահմանումը, արտադրության ծավալները, իրացման պայմանները, գործընկերների ընտրությունը և շուկայական ռազմավարությունը: Հենց այս ինքնուրույնությունն է ստեղծում իրական մրցակցային ճնշում, որի արդյունքում շուկան գործում է արդյունավետ, իսկ սպառողը հնարավորություն է ստանում ընտրելու առավել շահավետ առաջարկը: Սակայն եթե տնտեսավարող սուբյեկտները հրաժարվում են միմյանցից անկախ գործելու սկզբունքից և սկսում են համաձայնեցնել իրենց վարքագիծը, մրցակցային գործընթացը փաստացի դադարում է գործել, քանի որ շուկայի մասնակիցների միջև մրցակցությունը փոխարինվում է համագործակցությամբ, որն ուղղված է սեփական տնտեսական շահերի առավելագույն պաշտպանությանը՝ ի վնաս շուկայի և սպառողների:

Հենց այս պատճառով է, որ օրենքը արգելում է այն համաձայնությունները, որոշումները կամ համաձայնեցված գործողությունները, որոնց նպատակն է կամ հետևանքը՝ մրցակցության սահմանափակումը, կանխումը կամ խաթարումը: Հատկանշական է, որ օրենսդիրը հակամրցակցային է համարում ոչ միայն արդեն բացասական հետևանք առաջացրած համաձայնությունները, այլ նաև այնպիսի համաձայնությունները, որոնք իրենց բնույթով ունակ են հանգեցնել մրցակցության սահմանափակման<sup>13</sup>: Այս մոտեցումը պայմանավորված է մրցակցային իրավունքի

<sup>12</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5:

<sup>13</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1:

կանխարգելիչ բնույթով, քանի որ շատ դեպքերում շուկային հասցված վնասը կարող է դառնալ անդառնալի, եթե իրավասու մարմինը միջամտի միայն այն ժամանակ, երբ հակամրցակցային հետևանքներն արդեն ամբողջությամբ դրսևորվել են:

Թեև Օրենքում թվարկված վարքագծերն ունեն տարբեր իրավական դրսևորումներ, դրանց բոլորի հիմքում ընկած է նույն տնտեսական գաղափարը՝ շուկայական մրցակցության փոխարինումը տնտեսավարող սուբյեկտների միջև համագործակցությամբ: Արդյունքում շուկան կորցնում է իր ինքնակարգավորվող բնույթը, նվազում է արդյունավետ մրցակցային ճնշումը, սահմանափակվում են նոր տնտեսավարողների մուտքի հնարավորությունները, իսկ սպառողները զրկվում են ազատ ընտրության և մրցակցային գների առավելություններից:

Միաժամանակ, օրենքի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը որդեգրել է հավասարակշռված մոտեցում և չի դիտարկում տնտեսավարող սուբյեկտների միջև ցանկացած համագործակցություն որպես իրավախախտում: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ տնտեսական գործունեության առանձնահատկությունները հաճախ պահանջում են համագործակցության տարբեր ձևերի կիրառում, որոնք կարող են նպաստել արտադրության արդյունավետության բարձրացմանը, տեխնոլոգիական զարգացմանը, ներդրումների խթանմանը կամ սպառողների շահերի առավել արդյունավետ պաշտպանությանը: Հետևաբար, օրենքը նախատեսում է նաև բացառություններ՝ թույլատրելով այնպիսի համաձայնություններ, որոնք, չնայած կարող են որոշակիորեն սահմանափակել մրցակցությունը, սակայն իրենց բնույթով ունեն ծանրակշիռ տնտեսական արժեք<sup>14</sup>: Այս մոտեցումը վկայում է, որ օրենքը հիմնված է ոչ թե ձևական արգելքների, այլ տնտեսական ազդեցության գնահատման վրա, որի շրջանակներում առաջնային նշանակություն ունի ոչ թե համաձայնության առկայության փաստը, այլ դրա ազդեցությունը մրցակցային միջավայրի վրա:

Օրենքի կարգավորման հաջորդ առանցքային ուղղությունը վերաբերում է գերիշխող դիրքի ինստիտուտին<sup>15</sup>, որի իրավական տրամաբանությունը էականորեն տարբերվում է հակամրցակցային համաձայնությունների կարգավորումից: Եթե հակամրցակցային համաձայնությունների դեպքում իրավական գնահատման հիմքում ընկած է տնտեսավարող սուբյեկտների միջև համագործակցությունը, ապա գերիշխող դիրքի կարգավորման դեպքում ուշադրության կենտրոնում գտնվում է առանձին տնտեսավարող սուբյեկտի շուկայական իշխանությունը և այդ իշխանության իրացման ձևերը: Այս համատեքստում անհրաժեշտ է առանձնահատուկ ընդգծել, որ օրենքը չի արգելում գերիշխող կամ մենաշնորհային դիրքի գոյությունը: Վերջիններս շուկայում կարող են

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, մաս 7:

<sup>15</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 6:

ձևավորվել նաև լիովին օրինաչափ տնտեսական գործունեության արդյունքում՝ բարձր արդյունավետության, նորարարությունների, ներդրումների կամ սպառողների վստահության շնորհիվ: Հետևաբար, մրցակցային իրավունքի նպատակը շուկայում խոշոր և հաջողակ տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը սահմանափակելը չէ, և համապատասխանաբար Օրենքի կարգավորման առարկան ոչ թե գերիշխող դիրքն է ինքնին, այլ այդ դիրքից բխող շուկայական իշխանության չարաշահումը: Հենց այս սկզբունքն է արտացոլված օրենքում, որը սահմանում է գերիշխող և մենաշնորհի դիրքերի գնահատման չափանիշները և առանձնացնում այնպիսի վարքագծերը, որոնք կարող են դիտվել որպես դրանց չարաշահում<sup>16</sup>: Այդ վարքագծի դրսևորումներն են, օրինակ, անհիմն բարձր կամ անհիմն ցածր գների կիրառումը, տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների սահմանումը, շուկա մուտքի արհեստական խոչընդոտների ստեղծումը, լրացուցիչ և չիմնավորված պարտավորությունների պարտադրումը, արտադրության կամ իրացման անհիմն սահմանափակումը, ինչպես նաև մրցակիցներին շուկայից դուրս մղելուն ուղղված այլ գործողություններ<sup>17</sup>: Նման վարքագծի հասարակական վտանգավորությունը պայմանավորված է նրանով, որ գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտն իր շուկայական իշխանության շնորհիվ կարող է ազդել ոչ միայն սեփական մրցակիցների, այլև ամբողջ շուկայի կառուցվածքի վրա՝ խաթարելով մրցակցության բնականոն զարգացումը:

Այսպիսով, օրենքի առաջին երկու հիմնարար ինստիտուտները՝ հակամրցակցային համաձայնությունների արգելքն ու գերիշխող դիրքի չարաշահման կանխումը, թեև կարգավորում են տարբեր բնույթի տնտեսական վարքագիծ, իրականում հետապնդում են նույն նպատակը՝ բացառել այնպիսի շուկայական վարքագիծը, որի հետևանքով մրցակցությունը դադարում է գործել որպես տնտեսական հարաբերությունների բնական կարգավորիչ: Եթե առաջին դեպքում մրցակցությունը սահմանափակվում է մի քանի տնտեսավարողների համաձայնեցված գործողությունների արդյունքում, ապա երկրորդ դեպքում՝ մեկ տնտեսավարող սուբյեկտի շուկայական իշխանության չարաշահման հետևանքով: Հետևաբար, նշված երկու ինստիտուտները փոխլրացնում են միմյանց՝ ապահովելով մրցակցային հարաբերությունների պաշտպանության համապարփակ համակարգ:

Օրենքի կարգավորման հաջորդ կարևոր ուղղությունը տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ պետական վերահսկողության իրականացումն է,

<sup>16</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 7:

<sup>17</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 2:

որն իր իրավական բնույթով էապես տարբերվում է հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահման կարգավորումից: Եթե վերջիններիս դեպքում պետական միջամտությունը պայմանավորված է արդեն առկա կամ դրսևորված հակամրցակցային վարքագծի կանխամար կամ դադարեցմամբ, ապա համակենտրոնացումների վերահսկողության նպատակն առավելապես կանխարգելիչ բնույթ ունի: Օրենսդիրը ելնում է այն կանխավարկածից, որ տնտեսական մրցակցությանը սպառնացող վտանգները կարող են առաջանալ ոչ միայն տնտեսավարող սուբյեկտների ընթացիկ վարքագծի, այլև շուկայի կառուցվածքային փոփոխությունների արդյունքում: Հետևաբար, մրցակցության արդյունավետ պաշտպանությունը ենթադրում է ոչ միայն արդեն կատարված խախտումների արձագանքում, այլև այնպիսի տնտեսական գործընթացների նախնական գնահատում, որոնք ապագայում կարող են հանգեցնել շուկայական իշխանության կենտրոնացման կամ մրցակցության էական սահմանափակման:

Այս համատեքստում օրենքը նախատեսում է համակենտրոնացումների նկատմամբ նախնական վերահսկողության մեխանիզմ<sup>18</sup>: Իրավական կարգավորման նպատակն այս դեպքում որևէ կերպ տնտեսական գործունեության սահմանափակումը չէ, քանի որ ձեռնարկությունների միավորումը կամ վերակազմավորումը կարող է պայմանավորված լինել արտադրության արդյունավետության բարձրացմամբ, ներդրումային հնարավորությունների ընդլայնմամբ կամ նոր շուկաներ մուտք գործելու անհրաժեշտությամբ: Այդուհանդերձ, եթե նման գործարքների արդյունքում ստեղծվում կամ ամրապնդվում է այնպիսի շուկայական կառուցվածք, որի պայմաններում մրցակցային ճնշումն էապես նվազում է կամ շուկան ձեռք է բերում բարձր կենտրոնացվածություն, պետությունը պարտավոր է միջամտել՝ մրցակցային միջավայրի պահպանման նպատակով: Այսպիսով, համակենտրոնացումների վերահսկողությունը հանդիսանում է մրցակցային իրավունքի կանխարգելիչ գործիք, որի կիրառման առանցքում ոչ թե իրավախախտման փաստն է, այլ ապագա մրցակցային ռիսկերի գնահատումը:

Տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգում ինքնուրույն նշանակություն ունի նաև անբարեխիղճ մրցակցության ինստիտուտը<sup>19</sup>: Եթե հակամրցակցային համաձայնությունները և գերիշխող դիրքի չարաշահումը հիմնականում ուղղված են շուկայի կառուցվածքային կամ տնտեսական հավասարակշռության պաշտպանությանը, ապա անբարեխիղճ մրցակցության կարգավորումը նպատակ ունի

<sup>18</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 8-10:

<sup>19</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 11-16:

ապահովելու շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների բարեխիղճ վարքագիծը և մրցակցության էթիկական չափանիշների պահպանումը: Ազատ մրցակցությունը ենթադրում է ոչ միայն տնտեսավարողների իրավահավասարություն, այլև այնպիսի մրցակցային մեթոդների կիրառում, որոնք հիմնված են սեփական տնտեսական առավելությունների, նորարարությունների, արտադրանքի որակի կամ արդյունավետ կառավարման վրա: Հետևաբար, այնպիսի գործողությունները, որոնք հիմնված են խաբեության, մոլորեցման, այլ տնտեսավարողի գործարար համբավի վնասման, շփոթություն առաջացնելու կամ առևտրային գաղտնիքների ապօրինի օգտագործման վրա, չեն կարող դիտարկվել որպես իրավաչափ մրցակցային պայքարի ձևեր:

Այս կարգավորումների նշանակությունը մեծամասամբ պայմանավորված է տնտեսավարողների մասնավոր շահերի պաշտպանությանը, սակայն միաժամանակ դրանք նպաստում են շուկայի նկատմամբ հանրային վստահության պաշտպանությանը:

Շուկայական տնտեսության արդյունավետ գործունեությունն անհնար է այն պայմաններում, երբ սպառողները զրկված են հավաստի տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, իսկ նման պայմաններում տնտեսավարողները մրցակցային առավելություն են ձեռք բերում ոչ թե արդյունավետ գործունեության, այլ անօրինական մեթոդների կիրառման միջոցով: Հետևաբար, անբարեխիղճ մրցակցության արգելքը հանդիսանում է մրցակցության պաշտպանության համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը, քանի որ այն ապահովում է մրցակցության որակական կողմը՝ երաշխավորելով, որ շուկայում հաջողությունը պայմանավորված լինի տնտեսավարողի տնտեսական արդյունավետությամբ և բարձր որակով , այլ ոչ թե անբարեխիղճ գործելակերպով:

Հայաստանի Հանրապետության օրենքի առանձնահատկություններից է նաև այն, որ մրցակցության պաշտպանության առարկա է դարձնում ոչ միայն տնտեսավարող սուբյեկտների, այլև պետական իշխանության մարմինների գործունեությունը<sup>20</sup>: Ժամանակակից մրցակցային իրավունքի տեսության համաձայն՝ մրցակցային միջավայրի խաթարման պատճառ կարող են հանդիսանալ ոչ միայն մասնավոր սուբյեկտների հակամրցակցային գործողությունները, այլև պետական իշխանության այնպիսի որոշումները կամ վարչարարությունը, որոնք անհիմն առավելություններ են ստեղծում առանձին տնտեսավարողների համար կամ խոչընդոտում են մյուսների մուտքը շուկա: Հենց այս գաղափարն է ընկած օրենքի այն դրույթների հիմքում, որոնք սահմանափակում են պետական մարմինների հակամրցակցային վարքագիծը, նախատեսում են պետական

---

<sup>20</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, գլուխ 5:

օժանդակության նկատմամբ վերահսկողություն և մրցակցության տեսանկյունից իրավական ակտերի գնահատման մեխանիզմներ:

Այս կարգավորումները կարևոր նշանակություն ունեն իրավական պետության և շուկայական տնտեսության փոխհարաբերությունների տեսանկյունից: Դրանք արտահայտում են այն հիմնարար սկզբունքը, որ պետությունը մրցակցային հարաբերություններում պետք է հանդես գա որպես չեզոք կարգավորող, այլ ոչ թե շուկայական գործընթացների մասնակից կամ առանձին տնտեսավարողների տնտեսական շահերի պաշտպան: Եթե պետական մարմիններն իրենց լիազորություններն օգտագործեն առանձին տնտեսավարող սուբյեկտների համար արտոնյալ պայմաններ ստեղծելու, ընտրովի վարչարարություն իրականացնելու կամ շուկա մուտքի անհիմն խոչընդոտներ ձևավորելու նպատակով, ապա մրցակցային հարաբերությունների բնականոն զարգացումը կխաթարվի նույնիսկ այն դեպքում, երբ մասնավոր հատվածի կողմից որևէ հակամրցակցային վարքագիծ չի դրսևորվել: Հետևաբար, օրենքը մրցակցության պաշտպանության համակարգը կառուցում է այն սկզբունքի վրա, որ մրցակցային չեզոքության պարտականությունը հավասարապես տարածվում է ինչպես մասնավոր տնտեսավարողների, այնպես էլ հանրային իշխանության մարմինների վրա:

Անհրաժեշտ է նշել, որ օրենսդիրը ձևավորել է իրավական համալիր համակարգ, որի շրջանակներում մրցակցային հարաբերությունները կարգավորվում են նաև վարչական և քրեական օրենսդրությամբ՝ նախատեսելով համապատասխան իրավական պատասխանատվության միջոցներ մրցակցային օրենսդրության խախտման տարբեր դրսևորումների համար:

Մասնավորապես, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը սահմանում է վարչական պատասխանատվություն այն դեպքերի համար, երբ Հայաստանի Հանրապետության մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի պահանջով օրենքով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը չեն ներկայացվում կամ ներկայացվում են ոչ հավաստի տվյալներ<sup>21</sup>: Նման իրավախախտման համար պատասխանատվություն է նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ՝ տուգանքի ձևով, իսկ նույն խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում կիրառվում է առավել խիստ վարչական տույժ: Միաժամանակ, նույն օրենսգիրքը սահմանում է, որ նշված իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության և վարչական տույժերի նշանակման իրավասությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության

---

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 169.3:

հանձնաժողովին՝ դրանով իսկ ապահովելով մրցակցային օրենսդրության կատարման նկատմամբ վարչաիրավական վերահսկողության արդյունավետ իրականացումը<sup>22</sup>:

Միևնույն ժամանակ, տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում առավել վտանգավոր իրավախախտումները քրեաիրավական գնահատականի են արժանանում ՀՀ քրեական օրենսգրքով: Մասնավորապես, Քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում հակամրցակցային գործունեության համար, այդ թվում՝ հակամրցակցային համաձայնությունների կնքման, գերիշխող դիրքի չարաշահման, տնտեսական համակենտրոնացումները չհայտարարագրելու կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելու դեպքերում, եթե այդ գործողությունների հետևանքով սահմանափակվել, կանխվել կամ արգելվել է մրցակցությունը և պատճառվել է խոշոր չափերի գույքային վնաս կամ ստացվել է խոշոր չափերի շահույթ: Ընդ որում, օրենսդիրը նախատեսել է առավել խիստ քրեական պատասխանատվություն այն դեպքերի համար, երբ նման արարքները կատարվել են իշխանական կամ ծառայողական լիազորություններն օգտագործելով, շանտաժի միջոցով, հանցավոր կազմակերպության կողմից կամ հանգեցրել են առանձնապես խոշոր չափերի վնասի կամ շահույթի<sup>23</sup>: Այս կարգավորումները վկայում են, որ տնտեսական մրցակցության պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում դիտարկվում է ոչ միայն որպես տնտեսական քաղաքականության, այլև որպես հանրային անվտանգության և տնտեսական կարգի պահպանման կարևորագույն ուղղություններից մեկը, որի դեմ ուղղված առավել ծանր ոտնձգությունները քրեականացվել են:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության իրավական պաշտպանության համակարգը կրում է համալիր բնույթ և հիմնված է իրավական պաշտպանության տարբեր մակարդակների համակցման վրա: Եթե «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է մրցակցային հարաբերությունների նյութաիրավական կարգավորումը, ապա վարչական օրենսդրությունն ապահովում է մրցակցային վերահսկողության արդյունավետ իրականացումը և Հանձնաժողովի պահանջների կատարման պարտադիր բնույթը, իսկ քրեական օրենսդրությունը պաշտպանում է մրցակցային հարաբերությունները առավել վտանգավոր հակամրցակցային ոտնձգություններից՝ նախատեսելով քրեական պատասխանատվության միջոցներ: Նման բազմամակարդակ իրավակարգավորումը նպաստում է մրցակցային քաղաքականության արդյունավետ իրականացմանը և տնտեսական մրցակցության պաշտպանության ինստիտուտի գործնական արդյունավետության բարձրացմանը:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 244.8:

<sup>23</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 284:

Իրենց ամբողջության մեջ նշված ինստիտուտները ձևավորում են տնտեսական մրցակցության պաշտպանության միասնական իրավական համակարգ, որի նպատակն է պահպանել մրցակցային գործընթացի բնականոն զարգացումը, ապահովել տնտեսավարող սուբյեկտների համար հավասար մրցակցային պայմաններ և ստեղծել կայուն, կանխատեսելի ու արդյունավետ տնտեսական միջավայր:

## **ԳԼՈՒԽ 2. Տնտեսական մրցակցության խախտումների ազդեցությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա**

### **2.1. Օտարերկրյա ներդրումների իրավական և տնտեսական նշանակությունը: Մրցակցության խախտումների ազդեցությունը ներդրումային գրավչության վրա:**

Անհրաժեշտ է նշել, որ միջազգային ներդրումային իրավունքում բացակայում է միջազգային ներդրումը բնորոշող միասնական և համընդհանուր ընդունված հասկացություն: Տնտեսական գրականության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումները (Foreign Direct Investment – FDI) սովորաբար բնութագրվում են որպես այնպիսի ներդրումներ, որոնց միջոցով օտարերկրյա ներդրողը ձեռք է բերում ընդունող պետության տարածքում գործող ձեռնարկության նկատմամբ նշանակալի վերահսկողություն կամ կառավարման ազդեցություն<sup>24</sup>: Որպես այդպիսի ազդեցության առկայության չափանիշ՝ միջազգային վիճակագրական և տնտեսական մոտեցումներում հաճախ կիրառվում է ընկերության քվեարկության իրավունքների առնվազն 10 տոկոսի տիրապետումը: Այնուամենայնիվ, այս մոտեցումը հանդիսանում է հարաբերականորեն նեղ, քանի որ այն հիմնականում կենտրոնանում է վերահսկողության կամ կառավարման ազդեցության վրա և չի ընդգրկում ներդրումային հարաբերությունների ամբողջ բազմազանությունը:

Նույնիսկ միջազգային ներդրումային արբիտրաժի շրջանակներում տրիբունալները խուսափել են «ներդրում» հասկացության միասնական սահմանումից: Մասնավորապես, ICSID կոնվենցիան չի պարունակում ներդրման հասկացության հստակ սահմանում՝ դրա բովանդակության որոշումը թողնելով արբիտրաժային տրիբունալների մեկնաբանությանը: Այս պայմաններում ICSID գործերով ձևավորվել են մի շարք օբյեկտիվ չափանիշներ, որոնց միջոցով գնահատվում է տվյալ գործունեության՝ որպես ներդրում որակվելու հնարավորությունը: Այդ չափանիշներից առավել լայնորեն ճանաչվածը Սալինի ընդդեմ Մարոկկոյի գործով մշակված մոտեցումն է (Salini test)<sup>25</sup>: Համաձայն այս թեստի՝ ներդրումը, որպես կանոն, ենթադրում է չորս հիմնական տարրերի առկայություն՝ կապիտալի կամ այլ ռեսուրսների ներդրում, որոշակի տևողություն, ներդրումային գործունեության հետ կապված ռիսկի ստանձնում և ներդրում ընդունող պետության տնտեսական զարգացմանը նպաստելու հանգամանք: Միևնույն ժամանակ, հետագա

<sup>24</sup> Տե՛ս David Collins, *International Investment Law* (Cambridge University Press 2017):

<sup>25</sup> Տե՛ս Salini Costruttori S.p.A. and Italstrade S.p.A. v Kingdom of Morocco (Decision on Jurisdiction) ICSID Case No ARB/00/4 (23 July 2001):

արբիտրաժային պրակտիկայում այս չափանիշները չեն դիտարկվել որպես բացարձակ և պարտադիր պայմաններ, հատկապես տնտեսական զարգացմանը նպաստելու չափանիշը ստացել է ավելի ճկուն մեկնաբանություն:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները համաշխարհային տնտեսության զարգացման առանցքային գործոններից են, որոնք միաժամանակ կատարում են ֆինանսական, տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ դերակատարություն: Դրանք ապահովում են կապիտալի ներհոսք ընդունող տնտեսություններ, նպաստում են արտադրական կարողությունների ընդլայնմանը, ենթակառուցվածքների զարգացմանը և մասնավոր հատվածի մրցունակության բարձրացմանը: Բացի ֆինանսական ազդեցությունից, օտարերկրյա ներդրումները հաճախ ուղեկցվում են տեխնոլոգիական նորարարությունների փոխանցմամբ, կառավարման ժամանակակից ստանդարտների ներդրմամբ և աշխատաշուկայի որակական բարելավմամբ՝ երկարաժամկետ հեռանկարում բարձրացնելով տնտեսական աճի ներուժը:

Տնտեսական զարգացման տեսանկյունից ներդրումները դիտարկվում են որպես կայուն աճի հիմնական շարժիչ ուժերից մեկը:<sup>26</sup> Դրանք նպաստում են արտադրողականության բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, տեղական արտադրության ընդլայնմանը և արտահանման կարողությունների աճին: Ներդրումային հոսքերը նաև ուժեղացնում են հարկային բազան՝ ապահովելով պետական եկամուտների աճ, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել ավելի լայն սոցիալ-տնտեսական քաղաքականություն: Այդ պատճառով պետությունները հաճախ մրցակցում են օտարերկրյա ներդրումների ներգրավման համար՝ ձևավորելով համապատասխան հարկային, ինստիտուցիոնալ և կարգավորող խթաններ:

Ներդրումային միջավայրի որակը պայմանավորվում է մի շարք փոխկապակցված գործոններով, որոնց թվում առանձնանում են մակրոտնտեսական կայունությունը, քաղաքական կանխատեսելիությունը, ֆինանսական համակարգի զարգացվածությունը, ինչպես նաև իրավական համակարգի արդյունավետությունն ու անկախությունը: Կարևոր դեր ունի նաև շուկայի մրցակցային կառուցվածքը, քանի որ ներդրողները հակված են մուտք գործել այն շուկաներ, որտեղ սահմանափակված են մենաշնորհային դիրքերի չարաշահումները և ապահովված են տնտեսական գործունեության հավասար պայմաններ:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման համար վճռորոշ է նաև իրավական երաշխիքների որակը, մասնավորապես՝ սեփականության իրավունքների պաշտպանությունը, պայմանագրային պարտավորությունների կատարելիության ապահովումը և վեճերի արդյունավետ լուծման մեխանիզմների առկայությունը: Այս

---

<sup>26</sup> St'u David Collins, *International Investment Law* (Cambridge University Press 2017):

գործոնները ձևավորում են ներդրողների վստահությունը և նվազեցնում են իրավական ռիսկերի մակարդակը:

Մրցակցության խախտումները բացասաբար են ազդում տնտեսության բնական զարգացման վրա, քանի որ խաթարում են շուկայի արդյունավետ գործունեությունը և խոչընդոտում ռեսուրսների ճիշտ բաշխմանը: Դրանք կարող են դրսևորվել, օրինակ, մրցակիցների միջև հակամրցակցային համաձայնությունների կնքմամբ, գերիշխող դիրքի չարաշահմամբ կամ շուկայի մասնակիցների միջև արհեստական սահմանափակումների ստեղծմամբ: Նման երևույթները հանգեցնում են շուկայում տնտեսական ուժի կենտրոնացմանը և սահմանափակում են ազատ մրցակցության հնարավորությունները:

Երբ շուկայում առկա է բարձր կենտրոնացվածություն, նոր տնտեսավարող սուբյեկտների, այդ թվում՝ օտարերկրյա ներդրողների, մուտքը կարող է դժվարանալ: Այդ դժվարությունները կարող են կապված լինել շուկա մուտք գործելու բարձր ծախսերի, բարդ վարչական ընթացակարգերի կամ արդեն գործող ընկերությունների կողմից մատակարարման և բաշխման հիմնական ուղիների վերահսկման հետ: Այս պայմաններում նոր ներդրողների համար հավասար մրցակցային պայմաններ ապահովելը դառնում է ավելի բարդ:

Ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ունեն նաև կոռուպցիոն ռիսկերը և պետական կառավարման ոչ բավարար թափանցիկությունը: Դրանք մեծացնում են բիզնես վարելու ծախսերը և դժվարացնում ներդրողների կողմից ապագա ռիսկերի ու հնարավոր եկամուտների գնահատումը: Ներդրողների համար կարևոր է ոչ միայն օրենքների առկայությունը, այլև դրանց արդյունավետ և կանխատեսելի կիրառումը:

Բացի այդ, հակամրցակցային վարքագիծը և շուկայի մասնակիցների կողմից գների արհեստական փոփոխությունը կարող են խաթարել շուկայական ազդանշանները: Արդյունքում ներդրողները դժվարանում են իրական գնահատել շուկայի պայմանները, հնարավոր ռիսկերը և ներդրումների ակնկալվող արդյունքները:

Այսպիսով, մրցակցության խախտումները և դրանց նկատմամբ ոչ արդյունավետ վերահսկողությունը կարող են նվազեցնել երկրի ներդրումային գրավչությունը՝ սահմանափակելով շուկայի արդյունավետությունը և մեծացնելով ներդրողների համար անորոշության մակարդակը:

## **2.2. ՀՀ ներդրումային միջավայրի գնահատումը մրցակցային քաղաքականության համատեքստում**

Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի գնահատման կարևոր քաղաքականություններից է մրցակցային միջավայրի ուսումնասիրությունը, քանի որ շուկաների ազատությունը, տնտեսական մրցակցության արդյունավետ պաշտպանությունը և

տնտեսավարող սուբյեկտների համար հավասար պայմանների ապահովումը հանդիսանում են օտարերկրյա ներդրողների վստահության ձևավորման առանցքային նախադրյալներ: Թեև վերջին տարիներին իրականացվել են էական իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ, տնտեսության առանձին ոլորտներում շարունակում են պահպանվել մրցակցության սահմանափակման ռիսկեր, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ շուկաների արդյունավետ գործունեության, ներդրումների ներգրավման և երկրի ընդհանուր ներդրումային գրավչության վրա:

Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում հիմնական իրավասու մարմինը Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովն է, որի առաքելությունն է կանխարգելել, բացահայտել և վերացնել հակամրցակցային վարքագիծը, ինչպես նաև ապահովել շուկայի բոլոր մասնակիցների համար հավասար մրցակցային պայմաններ: Սակայն հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը պետք է գնահատվի ոչ միայն հարուցված վարույթների, ընդունված որոշումների կամ կիրառված պատժամիջոցների քանակով, այլև դրանց իրական ազդեցությամբ շուկաների կառուցվածքի, մրցակցության զարգացման, սպառողների շահերի պաշտպանության և նոր տնտեսավարողների շուկա մուտք գործելու հնարավորությունների վրա:

Այս տեսանկյունից ուշագրավ են Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի 2024 թվականի տարեկան հաղորդման տվյալները, որոնք վկայում են վերահսկողական գործունեության էական ակտիվացման մասին<sup>27</sup>: 2024 թվականին հարուցվել է 277 վարչական վարույթ՝ նախորդ տարվա 133-ի փոխարեն, ավարտվել է 285 վարույթ, իսկ ընդունվել է ավելի քան 410 վերջնական որոշում՝ կապված անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման, տնտեսական համակենտրոնացումների և պետական մարմինների հակամրցակցային գործողությունների հետ: Նույն տարվա ընթացքում նշանակվել է ավելի քան 3 միլիարդ դրամի տուգանք, ինչը հանձնաժողովի գործունեության պատմության մեջ ամենաբարձր ցուցանիշն է: Թեև այս տվյալները վկայում են մրցակցային օրենսդրության կիրառման զգալի ակտիվացման մասին, դրանց իրական արդյունավետությունը պետք է գնահատվի ոչ միայն պատժամիջոցների ծավալով, այլև այն հարցով, թե որքանով են դրանք նպաստել շուկաների կառուցվածքային բարելավմանը, մրցակցության զարգացմանը և նոր մասնակիցների համար մուտքի խոչընդոտների նվազեցմանը:

2024 թվականի ընթացքում հանձնաժողովը ուսումնասիրել է տնտեսության մի շարք ռազմավարական նշանակության ոլորտներ, այդ թվում՝ վառելիքի, հեռահաղորդակցության, սննդի առաքման, գազամատակարարման,

---

<sup>27</sup> Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի, 2024 թվականի տարեկան հաղորդում:

Էլեկտրաէներգետիկայի և երկաթուղային ենթակառուցվածքների շուկաները: Առանձնահատուկ նշանակություն ունի բենզինի շուկայում իրականացված վարույթը, որի արդյունքում հակամրցակցային համաձայնության համար չորս խոշոր ընկերությունների նկատմամբ կիրառվել է ավելի քան 1,07 միլիարդ դրամի ընդհանուր տուգանք: Հանձնաժողովը պարզել էր, որ ընկերությունները երկար ժամանակահատվածում համաժամանակյա փոփոխել են մանրածախ գները՝ անկախ իրենց ծախսային տարբերություններից, ինչը գնահատվել է որպես անուղղակի հակամրցակցային համաձայնություն: Նման որոշումները կարևոր նշանակություն ունեն ոչ միայն մրցակցային օրենսդրության հետևողական կիրառման, այլև շուկայի մասնակիցների համար հավասար մրցակցային պայմանների ապահովման և ներդրողների վստահության ամրապնդման տեսանկյունից:

Մրցակցային միջավայրի պահպանման կարևորագույն մեխանիզմներից է նաև տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ նախնական վերահսկողությունը, ինչի մասին խոսվել է աշխատության առաջին գլխում: 2024 թվականին Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը գնահատել է 57 համակենտրոնացում, արգելել մեկ համակենտրոնացում և պատասխանատվության միջոցներ կիրառել 22 չհայտարարված գործարքի կապակցությամբ: Հատուկ ուշադրության են արժանի բանկային ոլորտում իրականացված խոշոր գործարքները, մասնավորապես՝ «Արդշինբանկ»-«HSBC Բանկ Հայաստան» և «Bank of Georgia»-«Ամերիաբանկ» համակենտրոնացումները, որոնց գնահատման ընթացքում մանրամասն վերլուծվել է դրանց հնարավոր ազդեցությունը մրցակցային միջավայրի վրա: Այսպիսի կանխարգելիչ վերահսկողությունը նպաստում է շուկաների մրցակցային հավասարակշռության պահպանմանը և երկարաժամկետ ներդրումային կայունության ապահովմանը:

Մրցակցային քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է նաև միջազգային կազմակերպությունների կողմից, որոնց ուսումնասիրությունները կարևոր չափանիշ են երկրի ներդրումային միջավայրի գնահատման համար: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) Competitiveness Outlook գնահատումը, որն առաջին անգամ 2026 թվականին իրականացվել է Հայաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի համար<sup>28</sup>: Գնահատման շրջանակում ներդրումային քաղաքականությունը, ֆինանսական շուկաների զարգացումը, պետական ձեռնարկությունների կառավարումը և մրցակցային քաղաքականությունը դիտարկվում են որպես մրցունակության փոխկապակցված

քաղաքիչներ: OECD-ի մեթոդաբանությունը փաստում է, որ արդյունավետ մրցակցային քաղաքականությունը տնտեսական մրցունակության և ներդրումային գրավչության հիմնարար նախապայմաններից է: Նույն մոտեցումն են արտահայտում նաև Համաշխարհային բանկի, Եվրոպական միության և այլ միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունները, որոնց համաձայն օտարերկրյա ներդրողների համար վճարովի նշանակություն ունի ոչ միայն մրցակցային օրենսդրության առկայությունը, այլև դրա հետևողական, կանխատեսելի և արդյունավետ կիրառումը, որը նպաստում է շուկաների ազատությունը, հավասար մրցակցային պայմանների ապահովմանը և ներդրումային ռիսկերի նվազեցմանը:

Համաշխարհային բանկը ևս Հայաստանի ներդրումային միջավայրի բարելավումը դիտարկում է որպես երկրի տնտեսական զարգացման առաջնահերթություններից մեկը: 2026 թվականին հաստատված «Հայաստանի տնտեսական վերափոխման զարգացման քաղաքականության գործողության» շրջանակում առաջնահերթություն է տրվում ներդրումային և գործարար միջավայրի արդիականացմանը, մրցակցության և սպառողների պաշտպանության ամրապնդմանը, ինչպես նաև կարգավորող համակարգի արդյունավետության բարձրացմանը: Բարեփոխումների հիմնական ուղղություններն են ներդրումների իրավական շրջանակի կատարելագործումը, սպառողների պաշտպանության մեխանիզմների զարգացումը և անարդար առևտրային գործելակերպերի սահմանափակումը<sup>29</sup>:

Ներդրումային միջավայրի վերաբերյալ համանման գնահատական է ներկայացնում նաև Միավորված ազգերի կազմակերպության Առևտրի և զարգացման համաժողովը (UNCTAD), որի գնահատմամբ անկախությունից հետո Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն բարելավել է գործարար գործունեության իրավական և կարգավորող շրջանակը՝ պարզեցնելով հարկային համակարգը, զարգացնելով մրցակցային քաղաքականությունը և կատարելագործելով պետական կառավարման մեխանիզմները: Միաժամանակ գեկույցում ընդգծվում է, որ մի շարք ոլորտներում դեռևս պահպանվում են իրավական և ինստիտուցիոնալ խնդիրներ, որոնք պահանջում են հետագա բարեփոխումներ<sup>30</sup>:

Մասնավորապես, UNCTAD-ը նշում է, որ մի շարք շուկաներում պահպանվող բարձր կենտրոնացվածությունը շարունակում է սահմանափակել լրացուցիչ ներդրումների ներգրավումը: Անկախությունից հետո մի շարք ռազմավարական ակտիվներ պահպանվել են պետական սեփականության ներքո, իսկ իրականացված սեփականաշնորհման որոշ

<sup>29</sup> <https://www.worldbank.org/en/news/press-release/2026/03/30/world-bank-to-help-armenia-attract-investment-and-boost-competitiveness>

<sup>30</sup> UNCTAD. *Investment Policy Review: Armenia* (2019), էջ 8: [https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3\\_en.pdf](https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf)

գործընթացներ հանգեցրել են շուկաների բարձր կենտրոնացման<sup>31</sup>: Այդպիսի կառուցվածք է ձևավորվել, մասնավորապես, անտառտնտեսության, քամու էներգիայի արտադրության, էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման, նավթի և գազի բաշխման, ինչպես նաև երկաթուղային բեռնափոխադրումների ոլորտներում, որտեղ փաստացի գործում են մենաշնորհային կամ բարձր կենտրոնացված շուկաներ: Նման պայմաններում սահմանափակվում են ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների մուտքի հնարավորությունները, ինչը բացասաբար է անդրադառնում մրցակցության զարգացման և ներդրումային ակտիվության վրա:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի գնահատումը պահանջում է համալիր մոտեցում, որը ներառում է ոչ միայն մրցակցային օրենսդրության և ինստիտուցիոնալ մեխանիզմների վերլուծությունը, այլև դրանց գործնական կիրառության արդյունավետության գնահատումը: Վերջին տարիներին Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի գործունեության ակտիվացումը, վերահսկողական գործիքների ընդլայնումը և միջազգային կազմակերպությունների կողմից արձանագրված բարեփոխումները վկայում են մրցակցային քաղաքականության աստիճանական ամրապնդման մասին: Միևնույն ժամանակ, տնտեսության առանձին ոլորտներում պահպանվող բարձր կենտրոնացվածությունը, շուկաներ մուտք գործելու սահմանափակումները և իրավակիրառական պրակտիկայի հետագա կատարելագործման անհրաժեշտությունը ցույց են տալիս, որ ներդրումային միջավայրի շարունակական բարելավումը դեռևս մնում է Հայաստանի տնտեսական քաղաքականության կարևոր առաջնահերթություններից մեկը: Միայն արդյունավետ և կանխատեսելի մրցակցային միջավայրի ձևավորման պայմաններում հնարավոր կլինի ապահովել ներդրումային գրավչության կայուն աճ, շուկաների բացություն և տնտեսության երկարաժամկետ մրցունակության բարձրացում:

## **2.3. Մրցակցության խախտումների հետևանքով ներդրումային վեճերի առաջացման հնարավոր իրավական ռիսկերը**

Մրցակցային իրավունքի խախտումների և ներդրումային վեճերի միջև կապը դրսևորվում է այն դեպքերում, երբ պետության կողմից մրցակցային միջավայրի կարգավորման իրականացումը ազդում է օտարերկրյա ներդրողի ներդրման արժեքի, շուկայական դիրքի կամ օրինական ակնկալիքների վրա: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է տարբերակել սովորական մրցակցային խախտումները ներդրումային իրավունքի

---

<sup>31</sup> UNCTAD. *Investment Policy Review: Armenia* (2019), էջ 10:

խախտումներից, քանի որ միջազգային ներդրումային արբիտրաժը սովորաբար չի քննարկում մասնավոր տնտեսվարողների միջև հակամրցակցային վարքագիծը ինքնին, այլ գնահատում է պետության գործողությունները կամ անգործությունը, որոնք կարող են հանգեցնել ներդրողի նկատմամբ միջազգային պարտավորությունների խախտման: Այնուամենայնիվ, անհրաժեշտություն է առաջանում հասկանալ արդյո՞ք տնտեսական մրցակցության խախտումները կարող են հիմք հանդիսանալ ներդրումային վեճի համար:

Պատասխանելով վերոնշյալ հարցին՝ անհրաժեշտ է նշել, որ մրցակցային իրավունքի ոլորտում ներդրումային վեճերի առաջացման հնարավոր հիմքերից մեկը պետության կողմից մրցակցային կանոնների ոչ հավասար կամ ընտրովի կիրառումն է: Նման իրավիճակ կարող է առաջանալ, երբ պետական մարմինները նույն կամ համադրելի իրավիճակում գտնվող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառում են տարբեր մոտեցումներ՝ որոշ ընկերությունների տրամադրելով առավելություններ, արտոնություններ կամ պաշտպանություն, իսկ մյուսների նկատմամբ կիրառելով առավել խիստ կարգավորումներ:

Այսպիսի գործողությունները կարող են դիտարկվել ոչ միայն որպես մրցակցության խախտում, այլ նաև որպես ներդրումային պաշտպանության չափանիշների հնարավոր խախտում: Մասնավորապես, եթե կարգավորիչ միջոցառումները հանգեցնում են օտարերկրյա ներդրողի նկատմամբ անհիմն տարբերակված վերաբերմունքի, կարող են առաջանալ հարցեր՝ կապված խտրականության արգելքի, արդար և հավասար վերաբերմունքի և ներդրողի օրինական ակնկալիքների պաշտպանության հետ:

Օրինակ՝ եթե պետությունը շուկայում գործող որոշ ընկերությունների նկատմամբ մեղմացնում է մրցակցային սահմանափակումները կամ տրամադրում է հատուկ կարգավիճակ, մինչդեռ օտարերկրյա ներդրողի նկատմամբ կիրառում է ավելի սահմանափակող միջոցներ, այդ տարբերակված մոտեցումը կարող է հիմք հանդիսանալ ներդրումային վեճի համար՝ պայմանով, որ այն ազդել է ներդրման տնտեսական արժեքի կամ շահագործման հնարավորությունների վրա:

Ներդրումային վեճերի հնարավոր աղբյուր կարող է հանդիսանալ նաև պետության կողմից մրցակցության պաշտպանության մեխանիզմների անարդյունավետ կիրառումը: Սակայն այստեղ կարևոր է նշել, որ պետությունը սովորաբար չի կրում պատասխանատվություն յուրաքանչյուր մասնավոր ընկերության հակամրցակցային գործողության համար: Միջազգային ներդրումային իրավունքի շրջանակում հարցը հիմնականում վերաբերում է նրան, թե արդյոք պետությունը կատարել է իր կարգավորիչ պարտականությունը և ապահովել է այնպիսի միջավայր, որտեղ ներդրողը կարող է իրականացնել իր գործունեությունը:

Եթե հակամրցակցային վարքագիծը կրում է համակարգային բնույթ, օրինակ՝ շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերությունը երկար ժամանակ սահմանափակում է

մրցակիցների մուտքը, իսկ իրավասու պետական մարմինները չեն իրականացնում արդյունավետ վերահսկողություն կամ չեն տրամադրում իրավական պաշտպանություն, ապա նման իրավիճակը որոշ դեպքերում կարող է դիտարկվել որպես ներդրողի իրավունքների խախտում:

Վերոնշյալին զուգահեռ անհրաժեշտ է նաև հաշվի առնել պետության կարգավորիչ ինքնիշխանության սկզբունքը, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում. պետությունները իրավունք ունեն իրականացնելու տնտեսական քաղաքականություն և կարգավորելու շուկաները: Հետևաբար, միայն այն հանգամանքը, որ պետական որոշումը բացասաբար է ազդել ներդրողի վրա, բավարար չէ ներդրումային վեճի առաջացման համար: Անհրաժեշտ է ցույց տալ, որ տվյալ միջոցառումը եղել է կամայական, խտրական, անհամաչափ կամ հակասել է պետության կողմից ստանձնած միջազգային ներդրումային պարտավորություններին:

Այսպիսով, մրցակցային իրավունքի խախտումները ներդրումային վեճերի հիմք կարող են դառնալ հիմնականում այն դեպքերում, երբ դրանք կապված են ոչ միայն շուկայում մրցակցության սահմանափակման հետ, այլ նաև պետության վարքագծի հետ՝ որպես կարգավորող մարմին: Հետևաբար, ներդրումային արբիտրաժի շրջանակում առանցքային նշանակություն ունի ոչ թե միայն մրցակցության խախտման փաստը, այլ այն, թե արդյոք պետության գործողությունները կամ անգործությունը խախտել են ներդրողի նկատմամբ կիրառելի միջազգային պաշտպանության չափանիշները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական մրցակցության արդյունավետ պաշտպանությունը ժամանակակից շուկայական տնտեսության հիմնարար նախապայմաններից է և կարևոր դեր ունի օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում: Ազատ և հավասար մրցակցային միջավայրը նպաստում է շուկաների ազատությանը, տնտեսավարող սուբյեկտների միջև արդար մրցակցությանը, ռեսուրսների արդյունավետ բաշխմանը և ներդրողների վստահության ձևավորմանը: Հակառակը՝ հակամրցակցային համաձայնությունները, գերիշխող դիրքի չարաշահումը, շուկաների բարձր կենտրոնացվածությունը և պետական մարմինների կողմից անհավասար կարգավորումը կարող են նվազեցնել ներդրումային գրավչությունը և մեծացնել ներդրումային ռիսկերը:

Աշխատության ընթացքում կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին իրականացվել են մրցակցային քաղաքականության և իրավական կարգավորման էական բարեփոխումներ: Նոր իրավական կարգավորումները, Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի լիազորությունների ընդլայնումը և իրավակիրառ պրակտիկայի ակտիվացումը վկայում են մրցակցության պաշտպանության ինստիտուտի աստիճանական ամրապնդման մասին: Միաժամանակ միջազգային կազմակերպությունների գնահատականները փաստում են, որ տնտեսության առանձին ոլորտներում դեռևս պահպանվում են բարձր կենտրոնացվածություն, շուկա մուտքի սահմանափակումներ և մրցակցության արդյունավետության հետ կապված խնդիրներ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ ներդրումային միջավայրի վրա:

Ուսումնասիրությունը նաև ցույց տվեց, որ մրցակցային իրավունքի խախտումները կարող են միջազգային ներդրումային հարաբերություններում առաջացնել իրավական ռիսկեր, հատկապես այն դեպքերում, երբ պետությունը մրցակցային կանոնները կիրառում է ընտրովի կամ խտրական ձևով՝ խախտելով ներդրողների նկատմամբ արդար և հավասար վերաբերմունքի, օրինական ակնկալիքների կամ ոչ խտրականության սկզբունքները: Թեև միջազգային ներդրումային արբիտրաժը սովորաբար չի քննում մասնավոր տնտեսավարողների միջև մրցակցային վեճերը, պետության մրցակցային քաղաքականությունը կարող է դառնալ ներդրումային վեճերի առաջացման կարևոր գործոն:

Այսպիսով, տնտեսական մրցակցության արդյունավետ պաշտպանությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես ներքին տնտեսական քաղաքականության բաղադրիչ, այլև որպես ներդրումային քաղաքականության կարևոր ուղղություն: Հայաստանի Հանրապետության համար ներդրումային գրավչության հետագա բարձրացումը

պահանջում է շարունակական ինստիտուցիոնալ բարեփոխումներ, մրցակցային օրենսդրության հետևողական կիրառում, շուկաների բացության ապահովում, պետական մարմինների մրցակցային չեզոքության ամրապնդում և կանխատեսելի իրավական միջավայրի ձևավորում, ինչը կնպաստի կայուն տնտեսական զարգացմանն ու օտարերկրյա ներդրումների աճին:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## Ակադեմիական գրականություն

1. Massimo Motta, *Competition Policy: Theory and Practice* (Cambridge University Press 2004).
2. David Collins, *International Investment Law* (Cambridge University Press 2017).
3. Van Bael & Bellis, *Competition Law of the European Union* (6th edn, Kluwer Law International 2021).
4. UNCTAD, *Investment Policy Review: Armenia* (United Nations 2019).
5. OECD, *Competitiveness Outlook 2026: Armenia, Moldova and Ukraine* (OECD 2026).
6. World Bank, *Armenia Economic Transformation Development Policy Operation* (2026).

## Միջազգային արբիտրաժային պրակտիկա

7. *Salini Costruttori SpA and Italstrade SpA v Kingdom of Morocco (Decision on Jurisdiction) ICSID Case No ARB/00/4 (23 July 2001).*

## Օրենսդրական ակտեր

8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
9. «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք:
10. ՀՀ բրեական օրենսգիրք:
11. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք:

## Այլ աղբյուրներ

12. Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի, 2024 թվականի տարեկան հաղորդում: